

բարք՝ ՚ի վարել զարօրն խրախուսեն սրա-  
ճիչ աղաղակօքն զեղինս առ ՚ի պատառել  
զտրամ երկիրն :

Այսպէս անմեղ սոքա վարէին կեանս  
հեռի ՚ի մարդաշատ քաղաքաց՝ պարա-  
պեալք ՚ի վաստակս մշակութեան ջանա-  
սէր փութով, մինչդեռ մեք հասաք և շրը-  
ջեցաք զբովանդակ գիւղն : Եթէ չէր նոցա  
երբեմն և առօրեայ պիտոյիցն նուազու-  
թիւն և հարկապահանջ բոնութիւնք, եր-  
ջանիկս արդարե համարել զնոսին յիրա-  
փ էր : Տնակն որ հիւրընկալեացն զմեզ՝  
մարդասէր խնամօքն զրեա թէ ՚ի մոռա-  
ցոնս իմն արկանել ճգնէր զքաղցր յիշա-  
տակ հայրենի քաղաքիս . սովորութիւնք  
և քարք բարք շինականացն այնպէս իմն  
կապեցին զսիրտ իմ, զի ոչ երբէք ջնջեո-  
ցի ՚ի մասց իմոց յիշատակ նոցա : Ի լինել  
ինձ պատեհին միւսանդամ դարձ ՚ի նոսին  
արարից բնակութիւն, և քաղցր ՚ի կեանս  
միշտ լիցի յիշատակ աւուրց զորս վայե-  
լեցի անդ :

Յետ աւուր միոյ անցանելոյ հարկ եղե  
մեղ թողուլ զվայրն՝ երկինքն կապուտակ  
՚ի վերջին նշոյլս արեգին պճնաղարդէր  
և մեր ՚ի կարմրագեղ զովազին պահուն  
անկաք վերստին ՚ի ճանապարհ ՚ի դէմ  
եղեալ մեր ՚ի խաչավանս :

### ԱԶԱՐԻԱ ՏԷՐ-ԱԶԱՐԵԱՆ

—

### ԱԼՊԵԱՆՑ ԳԵՏՆՍՓՈՐ ԱՆՑՔԸ

Քաղաքական ընկերութեան մը բա-  
րեկարգուելուն հետ ընթացակից է  
միշտ իրեն ճամբաներուն շտկուիլլ : Պե-  
տութեան մը նորակերտ ձուլուելու  
կամ վերանորոգելու ատեն հաստա-  
տուն հիմն ձգելուն անխարելի նշան  
կրնայ սեպուիլ ցուցած փոյթը՝ այն իսկ  
շփոթ խառնակութեանց ատեն՝ իրեն  
ճամբաներուն վրայ : Երբոր գաղղիա-  
կան ազգին՝ և թերես նոյն իսկ բովան-  
դակ Եւրոպիոյ՝ վերջին յեղափոխութիւ-  
նը՝ նախախնամութեան վճռովն նա-  
բոլէննեան հանճարոյն ձեռքքը կը կա-  
տարուէր, առաջին զործն եղաւ ընդ  
բովանդակ երեսս Եւրոպիոյ հիմակուան

ճանապարհաց ցանցին նախագիծ  
պատկերը իրեն զինուոց արագութեամբն  
տարածել, նախ իւր զինուորները, յե-  
տոյ իւր հրամանները քայլունելու հա-  
մար . բայց ինքն նախախնամութեան  
ձեռքը կոյր գործի մը, անով արդի քաղա-  
քականացեալ աշխարհին երջանկու-  
թիւնը կը պատրաստէր : Ամենայն ոք  
լած է թէ մինչև այս դարուս սկիզբ-  
ները ինչ ողորմ վիճակի մէջ կը գրտ-  
նուէին նոյն իսկ Եւրոպիոյ ճամբանե-  
րը : Ճանապարհաց վերանորոգութիւ-  
նը, կամ թէ ըսենք մանաւանդ՝ զա-  
նոնք ընդարձակ սահմանի մը մէջ զնե-  
լու ստեղծագործութիւնը, որով երկիր-  
ներ իրարու հետ լծորդութեան զրուե-  
ցան, այն կարգի գործերէն մէկն եղաւ,  
որոնք ժողովրդոց եթէ նիւթական և  
եթէ բարոյական յառաջադիմութեան  
ազգու մղում մը տուին : Շատ է այս-  
չափս ըսել, որ այն ազգերը որոնք ա-  
րագ ճանապարհաշէն ոգւոյն հետեւ-  
ցան, անոնք իրենց ներքին և նախկին  
ոյժը անեղծ պահեցին, և այսօր քա-  
ղաքականացեալ ազգաց կարգն անցան :

Երբոր Եւրոպիա խնամքով այս գոր-  
ծոյս կը պարապէր, յարմար ատենին  
հասաւ նաև շոգեկան ուժոյն գիւտը, և  
զանիկայ անմիջապէս ընդ ծով և ընդ  
ցամաք ճամբաներու գործածեցին շո-  
գենաւեր և շոգեկառքեր շինելով : Անով  
տեղափոխութեանց ամենայն կատարե-  
լութիւնները միանգամայն տրուեցան,  
և այն վայրկենէն ճամբորդութեան տեն-  
չը՝ դարձաւ եղաւ իրաք ժամանակիս  
տենդը :

Այսու բերմամբ ճամբաներու շինո-  
ղութեան արուեստը իրեն հրաշալիքը  
սկսաւ կատարել, և զիսաւորապէս բը-  
նութեան խափանարարները ընդ գե-  
տին վլուզանելով, և այնպիսի ամբար-  
տակներ կանգնելով անոնց տեղը, որ  
ժամանակիս եօթը հրաշալիքը կրնան  
սեպուիլ : Ոչ զետք, ոչ ձորք և ան-  
դունդը և ոչ իսկ բարձրութիւնք լե-  
րանց կրցան այս արշաւանաց դէմ զնել  
և անոնց ընթացքը խափանել, եթէ  
կամուրջներ ձգելու, եթէ բարձրաբերձ

կամարակապներով ձորեր լեցունելու, ժայռեր պատուելու և հողաբլուրներ ցածցունելու : Գետնափոր ուղիները որ առ նախնիս դուն ուրեք կը պատմուէին և որոց հետքը իբր զարմանալիք կը ցուցուէին, հիմա չկայ անոնց թիւը, և երկաթուղի ճամբայ մը չկայ, որ իրեն դունելները չունենայ : Ասոնց սակաւժամանակեայ միջոցի մէջ ստացած թիւը բաւական էր ցուցանելու որ արդի մեքենականութիւնը հնոց մեքենական արուեստէն շատ գերազանց է : — Բայց մինչև հիմա շինուածներով գեռ արուեստին հրաշալիքը կատարուած չէր :

Թէ որ երկաթուղեաց համաշխարհական տեղազիր տախտակի մը վրայ աչուրնիս պտըտցունելու ըլլանք, և տեղ մը նշմարենք որ անոնց ցանցակերպ թելը կտրուած է, թէ ոչ բնակչաց բարոյական անգործութենէն անշուշտ բնութեան զօրաւոր ընդդիմութենէն պէտք է որ խափանուած ըլլայ անոնց շարահիւսութիւնը : Թէպէտ բնութեան ամենայն արգելքները 'ի վայր կործանեցան, բայց դեռ բարձրաբերձ և ընդարձականիստ լերինքն չէ . դեռ խրոխտ ճակատները և ապառաժուտ պատուարները կանգուն կան . մինչև անոնց եկած յեցած են երկաթուղի ճամբաները : — Ի հնուց 'ի վեր մարդկային հնարագիտութիւնը յաջողեր էր այդ բարձրութիւններուն յաղթել՝ օճապըտոյտ ճամբաներով անոնց կողացը վըրայ ելլելով, և անոնց զառ 'ի վեր կողերուն այնպիսի հակումն տալով, որ կարելի ըլլայ անասնոց առանց շատ տաժանման իրենց բեռները կրել ու քաշել : Սակայն եթէ այդ հակմունքն և եթէ այդ ծամածութիւնքը կարելի չէր որ շողելար ինքնաշարժ մեքենայից ալ յարմարէին, որ ոչ զգալի զառիվայր և զառիվեր, և ոչ ալ զգալի պտոյտ դարձուածքներ կարող էին տանիլ : Թէպէտ և հարկին ստիպելովը շատ կերպ զիւտեր գտնուեցան այս կատարելութիւնն ալ տալու իրենց, որոնցմէ եղան մէկ քանին որ յաջողութեամբ պը-

սակեցան, և սկսան այնպիսի զառ'ի վայր ներէն վեր ելլել, որ ատենօք անհնարին էր . բայց հանդերձ այնու ոչ փափաքելոյն չափ, և ոչ ալ բոլորովին զերծ այն ծանր վտանգներէն, որոնք աւելի ահաւոր կ'ըլլան բարձր լերանց ապառաժներու և գահավէժներու մէջ : Ըղձալի և ծայրագոյն կատարելութեան հասցունելու համար, հարկ էր տեղափոխութեան դրութեան կերպը բոլորովին այլափոխել : Այս դժուարութիւններու զիմաց, միւս կողմանէ մինչև հիմա փորձուածները քննելով, և թէ ինչ յոյս կու տայ ապագայն՝ քաջ կշռելով, աներկբայելի կ'երևայ որ այս հնարքներէն և գիւտերէն և ոչ մէկը պիտի կարենայ հաւասարիլ այն դրութեան, որ կ'ուղէ երկաթուղեաց ճամբան իրեն սովորական տեղաշարժ մեքենայովը իրեն շտկութեանը մէջ պահել, և թէ որ թանձրութիւն մըն ալ դէմն ելէ, կտրել անցնիլ որպիսի և իցէ : Մեքենականութեան սկզբունքը առնողի մը համար դժուարին չէ հաշուկ առնուլ այն մեքենական ուժոյն ամենամեծ կորուստը, երբոր կառքերը մէկ մեծ բարձրութեան մը վրայ կ'ելլեն . չէ թէ միայն այս, հապա նաև առանց իսկ հաշուելուայդպիսի բարձրութեանց վրայ շինած ճամբաներուն ծանր ծախքերը, ամբաւ է իրենց պահպանութեանը և գործածութեանը համար զացած ծախքը : Սիմմէրինկի անցքը, որ ընդ Դրեսդ և ընդ վեննա, թէ որ՝ ոչ յոյժ կարի բարձրութիւն ունենալովն հանդերձ, քաջայանդուգն փորձ մըն է այս բանիս, յայտնի է որ իրեն կենաց երկարատեսութեանը վրայ հաստատ վըստահութիւն մը չկայ, և չզիտցուիր թէ որչափ դեռ կրնայ տոկալ այն անհնարին ծախուց, որ օր ըստ օրէ ընելու ըստիպուած է : Այդպիսի ճամբու շինութեան և պահեստին գացած դրամագլուխը հաջուելու ըլլանք, կը գտնենք գումար մը, որ բաւական կ'ըլլայ այնպիսի ձեռագործ մը հնարել, որ կարենայ այդ ծախքերը միանգամայն նըւազեցունել ու օգտել, և իր ապահո-

վութիւնը և հանգստութիւնը աճեցունել :

Մարդկային հնարագիտութեան սահման չուզելով ալ դնել, թէ որ համարինք թէ կարենայ վերջապէս այսպիսի անլուծանելի կարծուած խնդիրը քակել օր մը, և գամով զգամը խելով՝ ըստ առակին, մեքենական հնարքով մը զմեքենական խոչընդուրը վերցունելու ճամբայ մը գտնէ, — կը մնայ միշտ լեռնային տեղեաց բնական անխուսելի արգելքները, որոնց անհնարին կ'երևայ յաղթանակելը, որքան ընդարձակութիւն ալ տանք յուսոյ և ճգանց :

Քանզի լերանց բարձր կատարները, թէ ոչ միշտ, գոնէ տարւոյն մեծագոյն մասը ձեանց և սառուցից մեծամեծ շեղջակուտիւք ծածկեալ, անոնցմէ ազատ պահուելու հնարք բնտոելը և ոչ իսկ մողէ անցունելու է. նաև սարսափելի մրրիկներով ալ միշտ փոթորկեալ են, որոց չիք ինչ որ կարենայ դիմանալ : — Ո՞չ ապաքէն նոյն ինքն Մօն-Սընի լերան կառաց արքունի պողոտայն Ալպեանց անցից մէջ գեղեցկագոյններէն մէկն է, և քան զամէնը հանգստագոյն. ծովէն ունեցած բարձրութիւնը 2066 մետր է միայն, և իրեն բարեխառնութեան պայմաններն ալ շատ մեզմ. զի ձմեռնային միջին աստիճանն է — 7° ըստ հարիւրաչափի, և հազիւքի մը ատեն իրեն սաստկագոյն ցըրտութեամբը կ'իջնէ 'ի — 20° : Տասն և ութ մետր լայն ճամբով մը և առ առաւելն 8 առ ½ զառ 'ի վայր հակմամբ Մազդաղենեան ըսուած լերան գագաթը եղող դաշտը համարական շաբաթէն գրային կլիմայ մը կը գտնէ, մասնաւանդ լերան գագաթը գտուող լճին քով, որ ուրիշ հաւասարաբերձ տեղեաց վրայ գրեթէ չերևար : Սակայն այս ամենայն բարեմասնութեանց վրայ, տարւոյն 6էն գրեթէ մինչև 8 ամիսները ձիւնով կը ծածկուի, (որ անցեալ տարի օգոստոսի 14էն սկսաւ), և այնշափ բարձր կը դիզուի, որ հարկաւոր կ'ըլլոյ բալխիրով՝ զացող ճանապար-

հորդաց ճամբայ ցուցունելու համար շատ մը նշանահար ցիցեր անկել. և երբեմն ալ բոլորովին անանցանելի կ'ըլլայ օրերով. ինչպէս սովորական է նոյնիմբերի սկիզբները և մարտի վերջերը, երբոր լավէնօազ<sup>1</sup> ըսուած քամին փշելու ըլլայ Գաղղիոյ կողմէն . ոչ ծանրաբեռն կառքեր կը դիմանան այս հողմոյն բռնութեան դէմ, և ոչ հաստարմատ ծառեր՝ անոր թաւալեցուցած ահագին հիւսանց դիմաց . բայց ահեղ կ'ըլլայ տեսարանը և սարսափելի՝ երբոր նոյն ժամանակին փշելու ըլլայ հակառակ նաև իտալիոյ կողմէն լումպարտացի<sup>2</sup> ըսուած քամին . այս ժամանակներն են որ գրեթէ անպակաս ամեն տարի գժբաղդութիւններ կը լըստին : — Եթէ երկաթուղեաց կարեսր յատկութիւններն են իրեն երագութեան հետ՝ ապահովութիւն, ճշդութիւն ժամանակի և միօրինակ կարգ, միթէ յիշեալ պարագաներուս մէջ կը նայ այս իրեն պայմանները անշփոթպահել :

Զկայր երկիր մը որ այս ծանր խորհրդածութեանց յուսահատ, բայց և գրեթէ գժկամակ կերպով մը մտիկ ընէր, ինչպէս իտալիա, որուն հիւսիսային գաւառները բարձր Ալպեանց տակ ընկած, անոր ահեղ բարձրութիւններէն պատեալ պաշարեալ, առանց օտարներու արշաւանաց դէմ զինքը պաշտպաննելու, ուրիշ բանի չէին գար, բայց եթէ իրեն առևսարական շարժումը արգիլել, և թող չտալ որ իրեն շրջակայ ազգաց գործունէութեան շրջանին մէջ խառնուի : Բայց աւելի քան զամենայն բիէմննդ տժգոհ էր այս վիճակին, որ Ալպեանց ստորոտը բնակած, անոնց մէկ զլիսաւոր շղթան զինքը իր տէրութեան մասն եղող Սաւոյիայէն կը բաժնէր . (որ և այնու պատճառ իսկ յետ վերջին իտալական պատերազմին, իբրև աւելի Գաղղիոյ պատշաճող մասն իրեն բնական դրիւ-

<sup>1</sup> La vénouse.

<sup>2</sup> La lombarda.

քը, քան թէ իտալիոյ, զատուեցաւ ասկէ, և խառնեցաւ առաջնոյն 86 նահանգներուն հետ) : — Մեծ էր յիրաւի բնութեան արգելքը և աննուաճելի . սակայն մեծ ևս և անսանձ նաև մարդկային ըղձից բռնութիւնը, մանաւանդ երբոր իր ժամանակին արծարծեալ ըլլայ և հասունացեալ: Ուստի հարկ էր որ նիւթական բնութիւնը տեղի տայր իմանալի բնութեան յառաջաղէմ զարգացուցիչ օրինացը: Ժամանակն էր այս կոռուպյն, և ասպարէզն էր Ալպեանց բարձրութիւնները . ժամանակն էր որ այդ բարձրաբերձ անխոնարհելի դադաթունքն վերջապէս խոնարհին մարդկային ըղձիցը, և ըսուփի թէ այսուհետեւ Ալպիք չկան: Եւ զի ժամանակն էր՝ այնու իսկ յայտնի է, զի այսր մեծի ձեռնարկութեան հիմունքը ձգուեցան ասկէ երեսուն տարի առաջ ոչ այլ ուրեք, բայց շինականի մը խոհուն մորին մէջ, դոզցես բնութեան գաղտնի շնչմամբը ուսեալ. և զի արժանի է որ իւր անուամբը ճանցուի, այս շինականս կը կոչուէր Յովսէփ Մէտայլ:

Մէտայլ՝ Պարտոնէզգիա կամ Պարտոնէշ Բիէմնդի գեղը ծնած և մնած, ուր է հիմակուան գունելին իտալակողմն բերանը, հմուտ էր իւր լեռնավայր շըրջակայիցը, վարժ անոնց դրիցը և հասարակաց ճամբաններուն և շինութեանց իրրեւ տեղոյն շինուածապետը<sup>1</sup>. Ինքն իւր մոտաց խորհրդոյն վրայ սկեռեալ՝ ֆոէժիւսի և Լա-Ռու ըսուած կիրճերուն բարձրութեանց վրայ ընթանալով, հեռաւորութիւններ կը չափէր, տեղադիմներ կը հանէր, և իւր գեղջուկ երկրաչափի կոշտ գործեզրը մեծ գետնափոր ճամբուն առանցքը կ'ուզէր գրտնել. և վերջապէս 1839-ն Բիէմնդեցի զօրապետի մը ձեռօք կը համբածակէր կարոլոս-Ալբերտոս թագաւորին առաջարկել, թէ մարթ է Ալպեանց շղթայշար գօտոյն երկու կողմերը հարթ և կարճագոյն գետնափոր ճամբով մը իրարու միացունել, նշանակելով թէ

մը տեղոյն և որ դրիցը մէջ այս կրնար ըլլալ. և այնու կէտով՝ կ'ըսէր՝ կրնանկք բովանդակ Արևելքը Արևմուտքի հետ շաղկապել:

Գիւղականին խորհուրդը կայծ մըն էր զիւրավառ յարդի վրայ ընկած: Նախ նոյն ինքն թագաւորն այս խորհրդեանս վրայ կ'արթնայր, և անմիջապէս Մօս<sup>4</sup> պելճիացի շինուածապետին կը յանձնէր քննել առաջարկութիւնը: Մօս այն ժամանակները գրեթէ եւրոպական համբաւ ստացեր էր Պելճիոյ Լիէժ քաղըին քովի զառ՚ի վայրին վրայ շոգեկառքերը շարժելու համար հնարած հանճարեղ մեքենայով. որով կարոլոս-Ալբերտ զինքը իրեն կանչեց, և Բիէմնդի շինուածապետութեան տեսուչ անուանելով, և վերակացու Դուրինի և Ճէնովայի երկաթուղոյն, իրեն յանձնեց միանգամայն Ալպիքը ծակելուն խնդիրը: Մօս՝ Որոմզոյ շինուածապետին և Ս. Սիսմոն տա երկրաբանին հետ չորս տարի բովանդակ լերանցամէջներն և ափափաները պարտելով և չափչրփելով, իւր քննութիւնները 1845-ին տէրութեան հաղորդեց, վկայելով թէ ստոյգ էին Մէտայլի նշանած դրերը, և թէ իրօք Մօտան Սաւոյիայի և Պարտոնէշ Բիէմնդի գեղերը իրարմէ զատող Ալպեանց զանգուածը՝ ամենէն նեղ մասն էր, քան զնոյն Ալպեանց ուրիշ մասերը, տասնուերկու և կէս հազարամետր միայն թանձրութիւն ունենալով՝ ի միջի: Եւ այս օրուան օրս որ ձեռք զարկած են այդ գունելը բանալու, գրեթէ Մէտայլի նշանակեալ հետոցը վրայ է, թէ պէտ և իրեն վաղահաս մահը չներեց իրեն մտածութեան յաղթանակը տեսնել<sup>2</sup>:

Բայց Մէտայլ ուրիշ գեղեցիկ մը.

<sup>1</sup> Mauss.

<sup>2</sup> Մէտայլի ցուցած ուղղութիւնը, այն որ սկզբուած է այսօր՝ ի գործ գրուիլ, ոչ թէ Մօն-Սընի մերան տակն է, ինչպէս կը կարծուի կամ թէ կ'ըսուի սովորաբար, հապա անկէ 20 հազարամետր աւելի վար է, թաքօր ըսուած երան քովերը: Ուստի անհարազատ յորընընումն է Մօն-Սընիի կամ Կենեսիոս լերան դունել ըսելը:

ածութեամբ մ' ալ իր կեանքը կը կընքէր. 1842<sup>ին</sup> ուրիշ առաջարկութիւն մը կը ներկայացունեէր Շամպէսիի երկագործութեան և վաճառականութեան սենեկին: Ե'րսէր Ալպեան դունելին հիւսային բերանը դեռ առաջ երկնցունել Մօսիէնի ձորոյն մէջէն մինչև Շամպէսիի ձորակը. հոն դիմացի կրին լեռն ալ ծակելով՝ դէպ 'ի Լիոն գացող ճամբան բանալ, շիտակ դէպ 'ի Սէն-Ժէնիս Գաղղիոյ սահմանագրուխը ելլելով: Ասով Գաղղիոյ կեղրունէն դէպ արևելեան հարաւ ինջող երկաթուղիները Սաւոյիոյ երկրին մէջ կը կանչուէին, անկէ դէպ 'ի Զուլցերի և դէպ յիտալիա բաժնուելու: Գեղեցիկ առաջարկ այս երկրորդս ալ, որ ըզ-Շամպէսի Լիոնի դռները կը բերէր. բայց ստիպուեցաւ տեղի տալ Գաղղիոյ կառավարութեան պատերազմական դրից նկատմամբ ունեցած պատշաճութեանցը. ուստի 1853<sup>ին</sup> երրոր Վիկտոր-Էմմանուէլի երկաթուղին կը բացուէր, Լիոնի վրայ գացած ուղիղ գծէն խոտորելով, դէպ 'ի հիւսիս գարձաւ Պուրմէ լճին երկայնքը քերելու, և զընաց Գաղղիոյ երկաթուղեաց ցանցին հետ միացաւ Գիւլովի և Վալսուինի լեռնակրծից մէջէն:

Մէտայլի տուած խորհուրդը ուրիշ բան չէր, բայց եթէ նշանակել թէ ուսկից պէսք էր Ալպեանց քարաժայուր ծակել կարճագոյն գծով. բայց Մօս շինուածապետին կը մնայր՝ իրրեւ առաջնորդ գործոյն՝ յետ Մէտայլի նշանած ճամբան հաստատելու, կարևորագոյն և ծայրագոյն խնդրոյն իշնալ. այնէ, թէ ինչ ճամբով այն բարձրաբերձ լերինքը ծակելու է, և ինչ գործիք բանցունելու է դունելի մը, որուն նմանին դեռ երբէք ձեռք չէր զարնուած:

Առաջին գժուարութիւնը որ այսպիսի երկայն գետնուղի մը բանալու համար զարթեաւ. Մօս շինուածապետին միաքը՝ էր այն որ չէր կընար գուբեր բանալ, ինչպէս ամենայն դունելներու մէջ կ'ըլլար: Այս գուբերը ուրիշ բան չէին, բայց եթէ ընդ բովանդակ երկայ-

նութիւն բացուելու ճամբուն՝ իրեն գազաթնային մակարդակին մէջ իրարմէ չափաւոր հեռու հորեր բանալ. այս գուբերէն ալ միանդամայն դէպ 'ի առաջ և դէպ 'ի ետև աշխատելով՝ թէ գործողութիւնը կ'երագէր և թէ գունելին երկայնութիւնը անով կը հովահէր. ինչպէս Մարտիլիոյ մօտ եղած գունէլը որ 4800 մետրէն քիչ պակասէ, շինելու ատեն՝ քսանուերկու գուբերացին, և մէկ ուղղութեան վրայ քառասունուլեց առաջք ունեցաւ գործը, և 34 ամսուան մէջ լմնցաւ: Դժուարին չէր երևակայել որ 42000 մետր երկայնութեամբ գունէլ մը՝ 1600 մետր թանձրութեամբ կամարի մը տակէն անցնելով, անկարելի պիտի ըլլար այդպիսի գուբեր բանալ, որոց նուազագոյնը 500 մետր խորութիւն ունենալու էր. մինչեւ որ ինքը բացուէր, տակի ճամբան ուղիղ գծով իրեն հասած և առաջ ալ անցած կ'ըլլար: Կամ թէ երևելի շինուածապետի մը ըրած հաշուխնայելով՝ այսպիսի գուբեր մը միայն բանալու համար՝ քառասուն տարի պէտք էր<sup>1</sup>: Ուստի հարկ էր որ երկու առաջք միայն ունենար գործը՝ երկու ծայրերէն միայն մատչելի ըլլալով. և թէ որ սովորական կերպին միջին հաշուովը՝ օրական յառաջաղիմութիւնը 46 հարիւրդամետր գնելու ըլլայինք, առ սակաւ 36 տարի կը պահանջէր գործը լմնալու: Բայց քան զայն աւելի գժընդակ, առանց այդ գուբերուն ինչպէս կարելի պիտի ըլլար այդ ամբաւ երկայնութիւնը հովահրել: Ամենայն հնարք և ճարտարութիւնք որ ուրիշ սովորական ստորերկրեայ անցքեր բանալու համար գործածուեր էին, Ալպեանց ծակելուն ամենելին անօգուտ էին. և վայրապար էր այսպիսի նոր առաջարկութեան մը ձեռք զարնել, մինչեւ որ

<sup>1</sup> Ծատ անպատշաճութեանց վրայ այս մէկ գլխաւոր կէտն ալ կար, շատերուն թէրևս անձանօթ, որ այսպիսի խորունկ գուբեր բացուելով, չափազանց օդոյ շրջան կը ստանայ, որ անկարել կ'ըլլայ գունելին մէջ երթեւէկէկէլ.

Նոր և ստուգապէս յաջողելի հնարք մը չցուցուեր:

Մօս որ առաջին եղաւ այս առաջարկութեան վրայ խորհելու, կրնայ ըսուիլոր նաև առաջին եղաւ նոր և էական զիւտ մը մտածելու. այն էր ձեռնտու առնուլ նոյն ինքն Ալպեանց մատակարարած անսպառելի ոյժը, այն են ջր-վէժները, որ մշանջենակից են ձեանց և յաւիտենական սառնամանեաց: Այս ջրվէժներով պելճիացի շինուածապետը իր՝ ի վաղուց ճարտարեալ վիմափոր մեքենայն կը շարժէր, և որոց փորձը արդէն յաջողած էր իրեն առջի բացած դունէլներուն մէջ: Այս իրեն մեքենային էական կազմութեանը նայելով՝ կտրատող մլրատներ էին դէպ՝ ի առաջ երկնցած, աղատ իրարմէ, բայց ետեանց երկթէ մատուցներէ վեր վար կը խաղցուէին, դիմացի ժայռին վրայ զուգահեռական ակօսներ կը բանային, և հատուած հատուած ժայռերը կ'առանձնացունէին, որոնց պատառուածքներուն մէջ վերջը սեպեր և լծակներ միսելով՝ վար պիտի զլտորէին: Այս մեքենայն շարժողը երկայն փոկեայ պարան մըն էր, շարք մը ճախարակներու վրայ անվերջանալի կերպով փաթութած. այս ճախարակներուն վերջինը՝ որ դէպ՝ ի դունելին մուտքը կը նայէր, ինքն իր վրայ թաւալելովը՝ ճարտար եղանակաւ մը աղիքէ սերտ և պինդ զրապանակներ ուժով մը կը պրկէր, որոնց վրայ հաստատուած էին վերոյիշեալ վիմափոր մլրատները. երբոր այս զրապանակները իրենց բնական թրթը մանցը կը թողուէին, կտրատող մըկրատները շարժելու կը սկսէին: — Յիշեալ ճախարակաց ձեռքը նաև հողմահան գործիքներ կը դառնային, նըկուղին ներսը հովահարելու:

Մօսի առաջարկեալ մեքենայն մէկ մեծ եռանդ մը բորբոքեց՝ ի Սաւոյիա և ՚ի Բիէմննդ 1846 և 1847 տարիները. բայց ալ աւելի վառուեցաւ կարոլսու Ալպերտոս թագաւորը, որ ստէպ ստէպ վալտօդզոյ կ'երթայր Դուրինի մօտ, հոն կատարուած փորձերը աշօք տես-

նելու. և սովորական իր երթը արքայական պերճութեամբ էր, շուրջ պատեալ յիւրոց զօրապետաց և յերևելի շինուածապետաց: Ազնուական փառասիրութիւնը կը հրապուրէր իրեն այս եռանդը որ իր թագաւորութեան զարունոր պարծանքը մը տպաւորէ զԱլպիս կործանելով: կարծէր որ անոնց կարծրակութեան մը կը սպասէր, որ անդէն և անդ իւր նախնեաց խանձարուղը եղող Բիէմննդը մեծագործ պողոտայով մը տէրութեան անջատեալ մասին հետ միացունէ, և միանգամայն զերկումն ալ վերանորոգելով՝ Եւրոպական շարժման և շրջանին մէջ մտցունէ: իւր արիական միտքը այն ինչ արթնցած ՚ի տենչ մեծամեծ գործառութիւններ ունէր: Թագաւորին ախորժակին դիւրաւ միտեցաւ նաև ժողովրդեան ախորժակը, և այն ատենէն գողցես այս առաջարկութիւնը համաշխարհական փափաքելի ինչ եղած էր: Թէպէտ գիտնականք համոզեալ չէին առաջարկուած մեքենային կարողութեանը վրայ, բայց թէ Ալպիք ծակուելու էր, ամենայն միտք յայն միաբանեալ էր: Դեռ մոռցուած չեն 1848ին նախընթաց տարիները: Յուսադրութիւնը ընդհանուր էր, և վատահութիւնը անսահման. գողցես օդուն մէջ մեծամեծ իրաց ակնկալութեան յոյս մը կը ծածանէր, և մոտաց երևակայութիւնքըն անով կը մոգէին: Եւ ինչ չէր օրէն յուսալ յիրաւի, երբոր նոյն ինքն Բիէմննդ Եւրոպիոյ հնագոյն պետութիւններէն մէկը, և որ քան զամէնքը անշարժ կեցած էր մինչև ցայնժամ իրեն հայրենատուր աւանդութեանցը մէջ, ինքն իրմէ կը սկսէր շարժիլ, և անմորակ կը յառաջէր, առանց այլ ինչ ստիպող պատճառի, բայց եթէ իրեն ժողովրդեան սէրը և արդի քաղաքականութեան նորանոր պէտքերը իրեն նպատակ առնելով: կարոլոս-Ալ-

բերտոս իւր քաղաքական ազատութեան հիմը իրեն տնտեսական նորութիւններէն կը սկսէր : Ուտելեաց որոշուած գիւները կը ցածցունէր , միջին դարու մետաքսագործաց վրայ դրուած ծանր կանոնադրութիւնները կը վերցունէր . Սարտենիոյ կղզւոյն հին կառավարութեան հետքերը կը խափանէր , ժողովրդական ուսմանց հիմը կը ձգէր , և վերջապէս Ալպեանց ծակելու հսկայակերպ գործոյն հաստատապէս 'ի գլուխ տանելու ձեռք կը զարնէր : Այս իրեն ամեն մէկ շարժմունքը և ամեն մէկ քայլերը , որ զինքը իւր հին թագաւորութեան աւանդութիւններէն կը հեռացունէին , հասարակաց ծափածայն գովութիւնները կ'ընդունէին . անով՝ ալ աւելի ոգւյ առածգութիւն մը առնելով , ալ աւելի կ'երագէր քայլերը : Թագաւորը և ազգը 'ի միասին յառաջադէմ կ'ընթանային և 'ի միասին 'ի նոյն նպատակ կը ժամանէին , այն է 1848են սահմանադրութեանը . Երկորին ևս հաւասար պատրաստուած . մէկը մեծանձնութեամբ չնորհելու , և միւսը առանց խոռվայսյզ շփոթից ընդունելու :

Բայց այս ազատակամ և ազատամէր շարժմունքները տարօրինակ ուղղութիւն մը առած , ուր անոնք կանկ առին , հոն նաև Ալպեանց ծակելուն խորհուրդը դանդաղեցաւ : Այն միլիոնները զորս կարոլս-Ալպերտոս այս գործոյն կատարման համար ճշգելով հաւաքեր էր , զինուց և շփոթից մէջ ցնդեցան . և ինքն տարաբաղդիկ թագաւորն լքեալ և սըրտարեկ ոչ այնչափ պատերազմին անյաջող ելիցը՝ որչափ իւր ժողովրդեան համար յուսացած ակնկալութեանց փուճը ելլելուն վրայ , թողուց ձգեց իւր թագն անգամ պատերազմի դաշտին մէջ , և քաշուեցաւ գնաց յանկիւն ինչ եւրոպիոյ 'ի Բորդուկալ՝ տիսրագին իւր գերեզմանը բնտուելու :

Այս անակնկալ և ալէկոծ դէպքերը պատճառ եղան առ ժամս մոտցունել տալու զՄօս , և իրեն մեքենայն , և բիէ-

մոնդի մէջ ամենահոչակեալ խնդիրը : Բայց երբոր գտաւ երկիրը դարձեալ իւր խաղաղութիւնը , դարձեալ արթնցան մտքերը նոյն խորհրդեան վրայ . սակայն հայրեննեաց դժբաղութիւններէն ուսեալ՝ ոչ նովին վառվուուն և թեթև եռանդով մը ակնարկեցին Ալպեանց փորուածքին , ինչպէս որ 1848էն առաջ : Թուականը 1849 էր , պեճիացի շինուածապետին մեքենայն նախ մասնաւոր ժողովոյ մը ուշադիր քննութեանը յանձնեցին : — Այս ժողովոյն անդամոց մէջ նշանաւոր եղան Մէնապարէա և Բալէոգարա : Վերջինս Վենետիկեցի էր , փախստական 'ի բիէմոնդ , շինուածապետ անուանի և ընդերկար պաշտօնեայ եղած հասարակաց շինուածոց , որ և յետոյ Գավուր կոմսին աջ բազուկը : Քըննիչ ժողովոյն դատաստանը 1850ին բալէոգարայի ձեռքը ներկայացաւ պետութեան , յորում ծանր ծանր առարկութիւնք կային Մօսի մեքենային դէմ : Գլխաւոր առարկութիւնը պարանին անզօր ըլլալուն վրայ էր : Այս պարանին ոյժը կրնար մինչև ցփոքը ինչ հեռաւորութիւն շարժումը անցունել , բայց միթէ կրնար արդեզք հասցունել նաև մինչև դունելին կէսը , որ 6 հազարամետր երկայնութենէն աւելի էր : Դարձեալ՝ կեղրոնախոյս հողմահանները , որոնք վերոյիշեալ մեքենային ճախարակներուն վրայ հաստատուած պիտի դառնային , բաւական զօրաւոր չերեցան կարող ըլլալու դունելին մինչև ներքին խորութիւնը կենդանի օդ հացունելու : Ժայռը մկրատներով ակօսելու , և փոխանակ վառօղի՝ սեպերով ցատկեցունելու զրութիւնը՝ թէպէտ մեքենագէտը հնարած էր այնու խորհրդով որ օդը անարատ պահէ ըստ կարելոյն , որ վառօղին բոնկելներէն ստէպ կ'ապականէր , բայց անովինքն իրեն գիւտը կ'աւրէր . վառօղին անբաւ ոյժը՝ զանց կ'առնէր 'ի գործ ածելու , այն ոյժը որ հիմակուան ականահատից ամենամեծ օգնականն է , և կը վերադառնայր արուեստին ծագմանը և թերակատարութեանը , Հոռվմա-

յեցւոց մկրատները և սեպերը դարձեալ ձեռք առնլով և Արակինոսաց մուրծերը : Միովլ բանիւ՝ քննիչ ժողովը գիւտին տկար կողման հետ աւելի կը պատերազմէր . և երրոր կը դառնայր անոր ընդունելի մասերն ալ նշանակելու , և թէ տակաւին բոլորովին մերժելի չէ Ալպեանց ծակելուն ամենօգտակար խնդիրը , — իսկոյն կանկ կ'առնոյր՝ հասարակաց աղետից և պետութեան սպառեալ դանձին պատկերը դիմացը նկարուելով :

Եւ յիրափ այս իսկ էր մեծագոյն արդեկը գործոյն ձեռք զարնելու՝ եթէ Մօսի մեքենայովն ըլլար և եթէ այլ որ և իցէ գործեօք : Կամաց յօժարութիւնը և մոտաց հնարագիտութիւնը պատրաստ , բայց դանձը հատեր էր պատերազմին ծախիսիքը և յաղթականին հատուցանելու տուժիքը : Հարկ էր զայն նախ զօրացունել , և պետութեան ժամանակ շնորհել ողի առնլոյ , և վերջը այնպիսի գործոյ մը ձեռք զարնել , որ միլիոններու կարօտէր : Հարկ էր ուրեմն որ նաև այս խնդրոյն համար գավուր գայր , և տարակուսեալ վիճակին դարման տանէր : — Հասաւ իշխանութեան գավուր , դարուս նշանաւոր մարդիկներէն մէկը , որում միայն էր յանձն՝ իւր հայրենեաց վէրբերը բուժել : Լաւ ըմբռներ էր մեծախորհուրդ մարդը , որ այս մեծ գործը կատարելու համար արտաքին քաղաքագիտական հնարից հաւասար՝ պէտք էր նաև աշխարհքին տընտեսական խնդրոց և հասարակաց շինուածոց մոտագրութիւն ընել : Նովարայի պարտութենէն ետև մինչդեռ տակաւին անշուք և տարժանելի էին ժամանակները , այնպէս ուժով իր վարչութեան գաղանակները պրկեց գավուր , որում նաև ամենայն քաջասրատագոյն քաղաքագէտք չէին համարձակեր . զեռք առաւ աղատ փոխանակութիւնը՝ այնպիսի երկրի մը մէջ , որ ցայնժամ դեռ պաշտպանողական հին դրութեանը սովորած էր . սկսաւ սար-

կի շահարկութիւնը գործածել , ուր դրամով գլուխ շինողք զեռ ամենասակաւք էին : Ազգային ձեռագործներու համարձակութիւն տուաւ օտարաց հետ մրցելու , փոխառուին ալ փոխատուին հետ . որպէս զի զերկուսն ալ ստիպէ որ իրենց գործունէութիւնը աւելցունեն , և նախատեսութիւննին սրեն : — Իսկ երկաթուղեաց գալով , որ լոմապարտական պատերազմէն ետև մինչև ցիրիմեան արշաւանքը մեծագոյն խընդիրն էր որ զմիտքերը յուզեց , Գավուր մէկ դի ձգեց տէրութեան ծախիւք շինելու խորհուրդը , և օտար ընկերութիւնները և օտար դրամագլուխները օգնական կանչեց : — Բայց քան զամէնը աւելի Ալպեանց ծակելու խնդրոյն մէջ երեցուց Գավուր իւր քաջայանդուգն և միանգամայն խոհական վարմունքը :

Ցառաջ քան ուղղակի Մօն-Սընի լերան պատուարը զարնելու , մոտածեց Գավուր նախ երկու կողմէն երկաթուղեոյն երկու գծերը մերձեցունել , յորոց մէկը հիւսիսային կողմէն Առգ ձորակին մէջէն առաջ պիտի գայր մինչև 'ի Մօտան , և միւսը իտալիոյ կողմէն Տորա ձորոյն մէջէն մինչև 'ի Սուզա : Առաջնոյն համար Վիկտոր-Լմմանուէլ թագաւորին գաղղիայի ընկերութեան մը շնորհած թոյլատուութիւնը , և երկրորդին համար ալ պետութեան իւր ծախիսիքը Դուրինին գիծը մինչև 'ի Սուզա յառաջ վարելլ՝ Ալպեանց վրայ ընելու յարձակման յառաջընթաց պատրաստութիւնները պիտի ըլլային : Պետութիւնը մէկ կողմանէ , և առանձնականաց ճարտարութիւնը միւսկողմանէ մէյմը որ մօտենալու ըլլային այդ տեղոյն , անհրաժեշտ պիտի բռնազատուէին իրենց ճիզը և իրենց դրամազլուխնել այդ պատուարը վլուզանելու համար : Խառն ոյժ գործածելլ ոչ թէ մեծի պաշտօնէին բացարձակ կարծիքն էր . կ'ուզէր մանաւանդ ամէն բան առանձնականաց գործունէութեանը թողուլ աղատաբար իրենց դրամագլուխները իրարու հետ միացունելով , բայց այսպիսի դժուա-

րին և տարօրինակ գործողութեան մը մէջ, որուն ելքն անստոյդ և գործը երկայն, տեղը չէր ինքնակամ ազատութեան մը ձեռք թողուլ գործելու մէկ կողմին կամ միւս կողմին. ուրիշ կերպով կարելի չէր Ալակիքը անցնիլ, բայց եթէ պետութեան և առանձնականաց ճարտարութիւնը իրարու հետ միաբանեցունելով։

Չյերկարեց շատ Գավուրի նախանկատեալ խորհրդոյն դիտմունքը. Հիւսիսակողման ընկերութիւնը նախ՝ անհամբեր գտնուելով քան զպետութիւնը, որ չըլլայ թէ անգործ կենալովը իրեն վրայ առած թոյլտութեան շընորհը անպտուղ ըլլայ, 1856-ն առաջարկեց պետութեան նոր թոյլտութիւն մըն ալ չնորհել իրեն, որ Սաւոյոյ երկաթուղիքն մէկ կողմանէ լիոն-ձէնովայի Գաղղիական գծերուն հետ միացունէ, և միւս կողմանէ ալ անգրեսոնեայ Սուլայի գծին հետ՝ Մօն-Սընի լերան վրայէն ամերիկեան դրէմուէյ ըստուած երկաթուղլով անցնելով, որ կրնար 5, 6, և մինչև 9 առ 100 հակամամբ և մանրաղեղն պտոյտքներով լեռներէն վեր ելլել։ Եւրոպական շինուածապետներէն շատը, ինչպէս նաև Սաւոյիոյ երկաթուղլոյն ծառայութեան մէջ եղող անգղիացիքն և գաղղիացիք՝ հրապուրեցան Մօն-Սընիի վրայ այս ամերիկեան դրութիւնը յարմարցունել։ Սակայն Բիէմոնդի մէջ ամենեին ընդունելութիւն չգտաւ այս խորհուրդը, որ կը խափանէր գողցես դմիւս ստորերկրեայ անցից մոտածութիւնը։ Մէնապրէա, որ անոր նուիրակն էր, և 'ի վաղուց հեղինակութիւն մը առած այս խնդրոյն մէջ գիտնական կերպով քննելու՝ կը զինէր այս խորհրդոյն հակառակ, և այսպէս կը կանչէր յատենի. «Գիտէք, տեսարք, ինչ բաել է լեռներու վրայ ելլել. ճիզն մըն է ուժոյ մը յաղթելու որ ոչ երբէք կը յաղթուի. այն ինքն է երկրաքարչ ոյժը<sup>2</sup>: կ'ուղէք

իմանալ թէ ինչ ըսել է երկրաքարչ ոյժ երկաթուղեաց նկատմամբ. — ըսել է հինգ մետր բարձրութիւն ելլելու համար այնչափ աշխատութիւն գործածել, որչափ որ հորիզոնաբար հազարամետր մը երթալու համար պէտք է. կամ թէ ըսենք, հարիցը մետր բարձրութեան ելլելով, իբր քսան հազարամետր ընթացած կ'ըլլանք։ Ուստի որք կ'առաջարկեն Մօն-Սընիէն, փոխանակ շիտակ գետնափոր նկուղով անցնելու, անոր գաղաթէն անցնիլ, ուրիշ բան չեն ըներ, բայց եթէ 1300 մետրի ճամբան՝ որ իրեն բարձրութիւնն է լերան ստորոտէն առած՝ 140 000 մետրի երկնցունել»։

Ի վերայ այսր ամենայնի Գաղղիական ընկերութեան խնդիրը հանդերձ Մօն-Սընիի վրայի անցիւքն չնորհուցաւ Սարտենիական խորհրդարանէն<sup>1</sup>. և որ զարմանալին է և ինքն Սոմէյլեէ, որ հիմակուան լեռնափոր մեքենաներուն ստեղծողն է, հոն նուիրակ ըլլալովն ընդդիմութիւն մը չըրաւ։ Միայն այս ինչ գուրցեց, թէ «Յիրաւի մեքենականութիւնը առատ աղբիւր մըն է, որ եթէ ուղենանք՝ նաև ուղղաբերձ բարձրութեան շիտակ ելլել, կարող է հանել զմեղ. բայց թէ որ ուղենանք որ խնայողութեան իմաստուն սկզբանցը և շահու և պիտանի յառաջադիմութեան կանոնացը հետ համաձայնի, պէտք է որ բացարձակ կարելիէն իջնայ իրական, գործնական և օգտակար կարելոյն»։ — Իսկ Գավուր պատրաստ էր և ամենայն փորձոյ ձեռնտու ըլլալ, նաև ցնորականաց անզամ։ Զարմանալի իմն էր նկատել 'ի նմա մարդ մը դիմագրաւնետուող փորձերու մէջ, իսկ կառավարութեան գործոցը մէջ իր ամէն մէկ քոյլերը մանր զննող։ Իւր ծածուկ խորհուրդը՝ որ հրապուրել էր Սաւոյիոյ երկաթուղեաց Գաղղիական ընկերութիւնը, որ Ալպեանց ճշմարիտ ճամբան բանալու համոզուի, այն ճամբան՝ որով միայն կրնար այն բարձրաբերձ լերանց

<sup>1</sup> Վնդղ. Tramway, բախրուղի։

<sup>2</sup> Գլ. Gravité.

պատուարը հարթած ու քանդած սեպուիլ, հուսկ ուրեմն յաջողութեան մէջ ձգեց ճարտար եղանակաւ մը, թէ պէտ 'ի սկզբան շատ հակառակութիւն կրեց: Վերոյիշեալ Գաղղիական ընկերութեան առած թոյլտուութեանցը վրայ աւելցուց նաև անդր քան զԱլպիս Բիէմննդի մասին երկաթուղիներն ալ մինչև 'ի Պուֆփարուլա Դիշինոյի վրայ: Բիէմննդ, որ վրէժիննդիր էր աղատութեան, և իւր երկաթուղիները իրեն պատերազմական զործոց ամենօդտակար սեպեր էր, տեսնելով որ յանկարծ օտարոտի ընկերութիւն մը ընդարձակ մատակարարութեան տէր, խորհրդոց ատեանը 'ի Բարիլ հաստատած, բոլոր Սարտենիական պետութեան մէջ ծայր 'ի ծայրէ կը տարածուէր, Գիւլոզ կիրճէն սկսած, որ Գաղղիացւոց ձեռքն էր 'ի սահմանազլուխն, մինչև աւստրիական բերդորէից թնդանօթներուն տակ, վեր 'ի վայր շփոթեալ խոռվեցաւ ահազին սարսափէ և սոսկալի կասկածէ բոնուած: Այն ատենն էր որ Գավուրիւր բովանդակիշխանութեան ոյժը և սաստկութիւնը 'ի գործ զնելու բռնադատեցաւ այս կարգաւորութիւնը ընդունելի ընել տալու համար: Բայց միանդամայն ինքն իրածնին ալ իրեն ընդունել տալու համար՝ թերևս պէտք եղաւ նախ ուրիշ մէկ կէտ մը զիտել, որ ծածկուած էր հասարակաց տեսութենէ. այն է՝ Գաղղիոյ աղգապետին ծածուկ զիտաւորութիւնները. և իրաք այս կարգաւորութիւնը, որով մի և նոյն ընկերութեան ձեռքը կը յանձնուէին Գաղղիոյ սահմանազլուխն սկսած մինչև 'ի Սոլֆէրինոյ և 'ի Մաճէնդա գացող մեծամեծ ճամբանները, 1857-ին կատարուեցաւ ընդմէջ Բարիզեան ժողովոյն և 'ի Բլումպիէռ Գավուրի ընդ Նաբուէն կայսեր ըրած տեսութեանը:

Ինչ որ ուրեմն կը զիտէր Գավուր Ալտեանց ծակելուն նկատմամբ՝ յաջողեցաւ, առանց հասարակաց միագր եղածին խելահաս ըլլալու: Ընկերութիւնը յետ միանդամ Ալպեանց երկու կողման ճամբանները ձեռք բերելու, այնու-

հետեւ ինքն իրմէ յորդորուած վառուեցաւ այդ մեծ պատուարն ալ հարթել, որ իրեն ճամբան երկու կը կտրէր. ուստի և պետութեան հետ գաշնակցեցաւ որ 20 միլիոն ֆրանք դնէ իր կողմանէ Ալպեանց զունելը բացուելուն: Այսպէս 1857-ին մայիսի 14-ին չնորհեալ թոյլտութեամբն, որ և 'ի 29 յունիս ամսոյ նորին տարւոյ յօրէնս գրեցաւ, Ալպեանց ծակելուն խնդիրը դրամական մասին կողմանէ լուծուեցաւ: — Պետութիւնը այս մեծ ձեռնարկութեանը համար հարկաւոր քաղաքագիտական և մատակարարական միջոցները 'ի գործ դնելով, կը մնար այնուհետեւ գիտութեան և գիտոյ հանճարոյն՝ որ սկսած գործը յառաջ վարէ և աւարտէ:

Կը շարունակուի:

## ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

### ԱՄԵՐԻԿԱ

Պրազիլի բնակիչներէն են Պողոգուաք ըստածները: Այլ և այլ ցեղ կը բաժնուի Պրազիլի ժողովուրդը, որ բոլորը մէկէն վեց կամ եօթը միլիոնի չափ կը սեպուին. որոնց մէջ Ապիտակները քիչուր են, որոնք աւելի եւրոպացիք են և Գրէոլք. սեերը երկու կը բաժնուին՝ Խափիկի և Հնդիկ. ասոնցմէ ալ խառնուրդները տեսակ տեսակ անուններ ունին. ինչպէս Մամէլուգոս կ'ըսուին Հնդիկի և Սպիտակի խառնուրդները, Քաքուզոս՝ Հնդիկի և Խափիկի: Քրիստոնեայ Հնդիկները երկրագործութիւն կ'ընեն: Կան աղատ Հընդիկներ ալ որ գունդ գունդ անտառ-